

# մեղա եկավ

ՀՀ վճռաբեկ դատարանի նախկին նախագահ Յովհաննես Մանուկյանի հրաժարականի մասին մեր հրատարակումից հետո վերջինս, մեղմ ասած, իշխանական քարոզչության գնդակոծության կիզակետում հայտնվեց: Մենք նշել էինք, որ չնայած Մանուկյանը հնազանդորեն կատարել էր հանրառեության դեկավարության հրամանները, սակայն, միեւնույն ժամանակ, փորձել էր իր շեֆերին համոզել, որո՞ւմ էր մարտի 1-ի գործին քաղաքական լուծում տրվի, ինչի համար նա վտարանդու կարգավիճակում էր հայտնվել: Իշխանական քարոզչությունը անցած երկու օրերին հասցրեց դատական համակարգի եւ ողջ աշխարհի մեղքերը բարդել Մանուկյանի գլխին: Այսքանն արդեն բավարար էր, որո՞ւմ էր նա սոփիտակ դրոշ բարձրացներ, եւ երեկ Մանուկյանը մի հարցազրույց-հաղորդագրություն է տարածել՝ հայտարարելով, որ ինքը հրաժարական է տվել, քանի որ ցանկացել է փոխել գործունեության ոլորտը: Այս տատճառաբանությունը, մեղմ ասած, տարակուսանք է առաջացնում. ի վերջո, վճռաբեկ դատարանի նախագահի հրաժարականի մասին է խոսքը: Մի խոսքով, մարդը 2 օր դիմացավ իր նախկին ընկերների լուտանքներին, լրիվ հերոս է: